



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉԻ ԵՒ ՀՈԼԻԿՈՒՄՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

**ՀՈԳԵՒՈՐ ԱՐԺԷՔՆԵՐԸ ԱՒԵԼԻ՝ ՎԵՐ ԴԱՍԵՆՔ,
 ԲԱՆ՝ ՖԻԶԻԲԱԿԱՆ ՊԵՏՔԵՐԸ**

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Ս. Յովհաննու Կարապետի տօնը այս տարի կը զուգահայեր Երկուշաբթի, 15 Յունուարին:Նկատի ունենալով, որ այս տօնը նաեւ Հոլովուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է, Կիրակի, 14 Յունուարին, եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ Պատարագ մատուցուեցաւ եկեղեցւոյ մէջ, եւ խնդրուեցաւ մարգարէներու գերագոյնին եւ կիներուն մէջ ծնածներէն մեծագոյնին՝ Ս. Յովհաննես Սկրտիչի բարեխօսութիւնը, շարականագիրին բառերով՝ իր նշխարներուն միջոցաւ կեանքի դէղ շնորհելու քրիստոսի երկրպագողներու:

Ս. եւ անմահ Պատարագը մատոյց Թեմիս բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանը, որ իրեն առընթերակայ եւ Ս. Սեղանին սպասարկող ունէր Թեմիս քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչները՝ Գերայ. Տ. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեան: Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան եւ հոգաբարձութիւնը լաւագոյնս կազմակերպած էին, որպէսզի մեծ շուքով եւ հանդիսաւորապէս նշուէին զոյգ տօները:

«Հրաշափառ»ի երգեցողութեամբ, Առաջնորդ Սրբազան Հայրը մուտք գործեց եկեղեցի: Երգեցողութիւնը թովիչ թրթիռներով եւ ներդաշնակ քաղցրութեամբ կը կատարէր եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Փրոֆ. Արա Մանաշի, երգեհոնի ընկերակցութեամբ՝ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի:

Յընթացս Ս. Պատարագին, եւ քարոզէն առաջ, Սրբազան Հայրը կատարեց Ս. Աստուածամօր, Ս. Գրիգոր Լուսաւորչի, եւ շուրջ 40 սրբապատկերներու ու հաւատքի կոթողներու օծումը՝ ի պետս հաւատացելոց: Հոգեւոր խանդավառութիւնն ու յուզումնալից ապրումը տիրական էին բոլոր հաւատացեալներու սրտին մէջ ու աչքերուն վրայ. անոնք միաբերան եւ լիաթոք, դպիրներուն հետ կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Ամէն: Ալէլուիա՛, ալէլուիա՛, ալէլուիա՛»: Եւ ամէն անգամ որ Առաջնորդ Սրբազան Հայրը «Օրհնեսցի, օծեսցի եւ սրբեսցի» կ'ըսէր, կարծէք ներկաներուն սիրտը, միտքն ու հոգին էին որ կ'օրհնուէին, վերստին կ'օծուէին ու կը սրբուէին:

Հայոց դարաւոր ուխտն է այս, հայու գոյութեան գաղտնիքը, անմահութեան երաշխիքը, հաւատքի գրաւականը:

Քարոզի պահուն, Սրբազան Հայրը ամէն բանէ առաջ, փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, այս օրինեալ եւ եզակի պահուան համար, որ իր շնորհքով կատարուեցաւ սրբապատկերներու օծումը, աւելցնելով՝ «Տէ՛ր, ասոնց մէջէն բժշկութիւն պարգեւէ մեր ցաւերուն, մեղքերու ներում եւ քաւութիւն շնորհէ բոլորիս»: Ապա Սրբազանը անդրադարձաւ Ս. Յովհաննէս Մկրտիչի ծննդեան պարագաներուն եւ մանաւանդ անոր ծնելուն պատճառին մասին: Որովհետեւ, ըսաւ Սրբազանը, Ս. Յովհաննէս ինքնանպատակ չծնաւ, եւ ծնելէն ալ յետոյ ինքն իր անձին համար չապրեցաւ, իր անձը, իր ետը չմտածեց, այլ, շարականագրին բառերով, ան Աստուծոյ Որդիին մարդեղութեան ճանապարհին նախակարապետը, Արդարութեան Արեգակին ծագումը ծանուցանող արուստակը, Բանին Աստուծոյ գալուստը աւետողը, կարապետը եւ միաժամանակ Աստուծոյ Գառնուկը մկրտողը եղաւ: Ս. Յովհաննէս Մկրտիչ, աւելին, յորովայնէ որովայն Քրիստոսի երկրպագողը եղաւ, Աստուածորդոյն մարդեղութիւնը Ս. Հոգիով ճանչցաւ՝ տակաւին իր մօրը որովայնը եղած ժամանակը, իսկ իր ծնունդէն ետք, Ս. Հոգիին իմաստութեամբ Բարձրեալին անճառ խորհուրդները տեսնողը եղաւ, Բարձրելոյն մարգարէն: Ս. Յովհաննէս անկաշառ հաւատքի եւ համոզումի ախոյեան դարձաւ, հրաւիրելով մեզ մեր կեանքերը եւս խոնարհեցնելու Տիեզերքի Ստեղծիչին, Բանին, որ Յիսուս Քրիստոսն է: «Ս. Յովհաննէսի նման հոգեկան արժեքները աւելի՛ վեր դասենք, քան՝ ֆիզիքական մեր պետքերը», աւելցուց Սրբազան Հայրը, որովհետեւ հոգին «առաւել է քան զմարմին»:

Քարոզի աւարտին, Առաջնորդ Սրբազանը աղօթք բարձրացուց առ Աստուած, եւ ժողովուրդին սրտին թարգմանը հանդիսանալով, շարականագրին բառերով դիմեց Սուրբին ըսելով. «Դուն, ո՛վ Ս. Յովհաննէս, վերէն մեզի օգնութեան փութա՛, դուն՝ առաքեալ եւ մարգարէ, կարապետ եւ մկրտիչ Որդւոյն Աստուծոյ: Դուն, ինքնանուէր քահանայ, խաչին վրայ պատարագուած Քրիստոս Քահանայապետին, երգաբանողներուս եւ տօնողներուս պաշտամունքը մատուցանէ, եւ մեզի համար բարեխօսէ Քրիստոսի մօտ»:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ մատաղօրհնէք: Բաշխուող մասին հետ մատաղն ալ բաժնուեցաւ, եւ հաւատացեալներ իրենց տուները վերադարձան հոգեւոր ապրումներով լիցքաւորուած, ուրախութիւնը իրենց սրտին եւ մատաղը՝ իրենց ձեռքին:

ՍԻՐՈՅ ՃԱՇ

Պատարագէն անմիջապէս ետք, եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, ներկայութեամբ միաբան եւ քահանայ Հայրերուն, Ազգային Վարչութեան ներկայացուցիչներու, եկեղեցւոյ Հոգաբարձական կազմին, Տիկնանց Օժանդակ Մարմնին, Սարկաւազաց ու Դպրաց դասերուն, երգչախումբի անդամներուն, եկեղեցւոյ բարերարներուն ու բարեկամներուն, եւ հաւատացեալ բազմութեան:

Շնորհակալական խօսքով հանդէս եկաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, որ հոգաբարձութեան եւ իր անունով երախտագիտութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, եւ գնահատեց եկեղեցւոյ մեծ ընտանիքը: Ապա յատուկ կերպով շնորհակալութիւն յայտնեց եկեղեցւոյս օծման կնքածօր՝ Տիար Վահէ

Կարապետեանին ու անոր ընտանիքին, որոնք միշտ պատրաստ եղած են իրենց նիւթաբարոյական նուիրատուութեամբ օժանդակելու եկեղեցւոյ եւ իրենց ընտանիքին անունով կնքուած «Կարապետեան» սրահին:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր եւ բաշխուեցան գնահատագիրեր եկեղեցւոյ երգչախումբին մէջ քսան եւ անելի տարիներ ծառայութիւն բերած անդամ-անդամուհիներու: Յատուկ գնահատանքի արժանացաւ եկեղեցւոյ բանկալի պատասխանատու՝ Տիար Մեսրոպ Աբրահամեան, որ քսանհինգ տարիներէ ի վեր անշահախնդրօրէն եւ պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ կը ծառայէ Ս. Կարապետ մայր եկեղեցւոյ: Վերջին տարիներու անանդութիւն դարձած քաղցր սովորութեամբ մը, եկեղեցին կը պատուէ նաեւ նուիրեալ ծառայ մը: Այս տարի պատուընուեցաւ Ազգային Վարչութեան անդամ, Ազգային երեսփոխան եւ հոգաբարձութեան նախկին ատենապետներէն՝ Տիար Կարօ Աւագեան, որուն յանձնուեցաւ յիշատակի նուէր մը, եւ ընթերցուեցաւ այս առթիւ շնորհուած Առաջնորդ Սրբազան Հօր գնահատագիրը:

Խոր յուզումով, Տիար Կարօ Աւագեան խօսք արտասանեց եւ յիշեց իր ծերունազարդ մայրը, որ իր քայլերը եկեղեցի առաջնորդած էր փոքր տարիքէն, Լիբանանի Սրբոց Վարդանանց եկեղեցին, եւ այլուր. ան նաեւ յայտնեց, որ Հոլիվուտի մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը, տակաւին Վարդապետ ժամանակին, քաջալերած էր զինք, որ Ս. Կարապետ եկեղեցւոյ ճաբով ծառայէ Հայ ազգին:

Փակման խօսքը արտասանեց Սրբազան Հայրը, որ առանձին-առանձին գնահատեց այսօրուան կազմակերպիչ յանձնախումբը, եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձական կազմը, Տիկնանց Միութիւնը, երգչախումբը, սարկաւազաց դասը եւ բարերարները, կոչ ուղղելով բոլորին, որ այսպէս՝ համերաշխ ու միատեղ գործակցութեամբ միշտ կանգուն պահեն Ս. Կարապետ Մայր եկեղեցին, եւ ծաղկեցնեն զայն՝ ի փառս Աստուծոյ եւ մեր ժողովուրդին:

«Պահպանիչ» օրհնութեամբ եւ «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութեամբ վերջ գտաւ օրուան հանդիսութիւնները:

Պ.Վ.Կ.

*DURING HOLY MASS ON THE FEAST OF ST. JOHN THE BAPTIST
AND THE NAME DAY OF ST. GARABED CHURCH*

**LET US TEND TO OUR SPIRITUAL VALUES RATHER THAN
OUR PHYSICAL NEEDS**

DECLARED THE PRELATE

According to our church calendar, Monday, January 15, was the Feast of St. John the Baptist. This Feast was celebrated with Episcopal Holy Mass on Sunday, January 14, at St. Garabed Church in Hollywood, along with the name day of the church.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted Holy Mass, assisted at the altar by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, and parish priest Archpriest Fr. Vicken Vassilian.

With the singing of “Hrashapar” by the church choir, directed by Prof. Ara Manash and accompanied by Prof. Levon Aprahamian on the organ, the Prelate entered the church. Prior to delivering his sermon, the Prelate conducted the blessing of close to 40 saints’ icons, including that of the Holy Mother-of-God and St. Gregory the Illuminator.

The Prelate began his sermon by thanking God for the blessed occasion. He then reflected on the circumstances and reasons for the birth of St. John the Baptist, stating that he was born for a greater purpose than himself. In the words of the hymns, he was born to be the forerunner of Christ’s path to incarnation, the star who announced the rise of the Sun of Righteousness, the bearer of the news of the coming of Christ, and the Baptist of our Lord. St. John became the champion of true faith and convictions, inviting us to humble ourselves before our Lord, Jesus Christ. “Like St. John, let us tend to our spiritual values rather than our physical needs,” said the Prelate adding, “the spiritual is more important than the physical.” The Prelate concluded his sermon with a prayer beseeching St. John, the forerunner and Baptist, to be our intercessor with Christ.

At the conclusion of Mass, the blessing of “madagh” took place followed by a reception.

The reception was held at “Karapetian” hall presided over by the Prelate, and with the participation of Clergy members, Executive Council representatives, parish Board of Trustees and Ladies Auxiliary members, Deacons, Choir members, sponsors, friends, and parishioners. On behalf of the Board of Trustees, Archpriest Fr. Vicken Vassilian thanked the Prelate and expressed his appreciation to the church larger family. He specially thanked Mr. Vahe Karapetian and his family who continuously offer their financial and moral support to the church and to “Karapetian” Hall, which is named in their honor. Following the artistic program, certificates of appreciation were presented to those members who have been part of the choir for over twenty years. Also, Mr. Mesrob Aprahamian, who has served the church for over twenty-five years, was commended for his noble service. In keeping with the tradition of honoring a devoted servant of the church, this year Mr. Garo Avakian, Executive Council member, delegate, and former chair of the Board of Trustees, was honored for his decades-long devotion to the church. Mr. Avakian was presented with a memento and the Prelate’s letter of appreciation was read.

In his closing remarks, the Prelate thanked the organizers of the reception, the parish priest, Board of Trustees, Ladies Auxiliary, Choir, Deacons, and sponsors, urging them all to continue to selflessly serve God, our church, and our people.

The reception came to a close with the “Bahbanich” prayer and the singing of “Giligia”.